ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհուրդ

ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի նիստը կայացել է 2003թ. հունիսի 28-ին, օրակարգում ընդգրկված են եղել հետեւյալ հարցերը՝

1. ՀՀ նախարարությունների գերատեսչությունների եւ մարզպետարանների / Երեւանի քաղաքապետարանի/ կողմից 2003թ. իրականացվելիք երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերի մասին,

/Զեկուցող՝ Վ. Բարսեղյան/

2. «Բազե» համահայկական երիտասարդական երկրորդ հավաքի մասին,

/Զեկուցող՝ Վ. Բարսեղյան/

3. Այլ հարցեր:

- Երիտասարդական ոլորտին վերաբերող 2003թ. իրականացվելիք ծրագրերը ՀՀ կառավարության մասով՝ ընդունել ի գիտություն, ՀՀ նախարարությունների գերատեսչությունների եւ մարզպետարանների / Երեւանի քաղաքապետարանի/ մասով՝ հաստատել:

- ՀՀ նախարարներին, գերատեչությունների ղեկավարներին, Երեւանի քաղաքապետին, մարզպետներին՝ 7-օրյա ժամկետում ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Վ. Բարսեղյանին ներկայացնել ՀՀ 2003 թվականի պետական բյուջեի միջոցներով իրականացվելիք երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերը:

- ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Թ.Պողոսյանին, ՀՀ կառավարությանը առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ Դ. Վարդանյանին՝ համատեղ քննարկել եւ 7-օրյա ժամկետում ՀՀ վարչապետին ներկայացնել առաջարկություն «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն աշխատանքային տարածքով ապահովելու վերաբերյալ:

- ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Պ. Սաֆարյանին՝ 10-օրյա ժամկետում ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությունների հետ համատեղ քննարկել երիտասարդական ծրագրերի իրականացման հետ կապված ֆինանսական հիմնավորումները եւ ներկայացնել առաջարկություններ:

- Հավանություն տալ 2004թվականին երիտասարդության հարցերով պետական մարմինների ղեկավարների միջազգային խորհրդի հերթական նիստը Երեւանում կազմակերպելու եւ անցկացնելու առաջարկությանը:

- ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Վ. Բարսեղյանին՝ 2003թվականի իրականացվելիք երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերը վերջնական խմբագրումից հետո տրամադրել ՀՀ կառավարության աշխատակազմին՝ ՀՀ կառավարության Ինտերնետ էջում տեղադրելու համար:

ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի երկրորդ նիստը կայացել է 2003թ. դեկտեմբերի 12-ին, օրակարգում ունենալով 2003 թվականին երիտասարդության ոլորտում իրականացված ծրագրային միջոցառումների մասին հարցը:

Հանձնարավեց՝

- ՀՀ նախարարներին, գերատեսչությունների ղեկավարներին, ՀՀ մարզպետներին /Երեւանի քաղաքապետին/՝

մեկամսյա ժամկետում ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն ներկայացնել հաշվետվություն երիտասարդության ոլորտին վերաբերող 2003 թվականի աշխատանքային ծրագրով նախատեսված եւ իրականացված միջոցառումների մասին, ինչպես նաեւ 2004 թվականի աշխատանքային ծրագրերով նախատեսվող միջոցառումների ցանկը եւ ժամանակացույցը՝ նշելով պետական բյուջեի միջոցով իրականացված եւ իրականացվելիք երիտասարդության ոլորտին վերաբերող ծրագրերը:

- ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ /խորհրդի նախագահ/ Լ. Ասատրյանին՝

ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, ՀՀ մարզպետարանների /Երեւանի քաղաքապետարանի/ հաշվետվությունների հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ամփոփ հաշվետվություն 2003 թվականի երիտասարդության ոլորտում իրականացված ծրագրային միջոցառումների մասին, ինչպես նաեւ 2004 թվականի աշխատանքային ծրագրերով երիտասարդության ոլորտին վերաբերող միջոցառումների ցանկը եւ ժամանակացույցը:

- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության պետ / խորհրդի նախագահի տեղակալ / Ա. Կարապետյանին՝

«Համահայկական երիտասարդական միջազգային կենտրոն» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Սինանյանին ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի կազմում ընդգրկելու նպատակով 3-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություն ՀՀ վարչապետի 2000 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 734 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհրդի հաջորդ նիստը հրավիրել 2004 թվականի փետրվարի առաջին տասնօրյակում: